ԵՐԵՎԱՆԻ ԲՈՒՍԱԴԱՐԱՆԸ

Հայաստանի գիտական օջախներից է ակադեմիկոս Կոմարովի անվան բուսադարանը (հերբարիում)։ Գիտությունների ակադեմիայի բուսաբանական ինստիտուտի մասնաճյուղը կազմող այդ հաստատությունը զգալի աշխատանք է կատարում Հայաստանի բոլոր շրջաններից, ինչպես նաև անդրկովկասյան հանրապետություններից բույսերի բազմազան տեսակներ հավաքելու և պահպանելու ուղղությամբ։

Բուսադարանն ունի տեսակների հարուստ և հետաքրքիր հավաքածու, որ տարեցտարի հարստանում է։ Ներկայումս այստեղ կան բուսանմուշների պահպանման ավելի քան 150 հազար թերթիկ։ Հենց միայն Հայաստանի բուսական աշխարհի մոտ 300 տեսակները կազմում են 110 հազար թերթիկ։

Բուսադարանը գիտական կապեր է պահպանում Սովետական Միության մյուս հանրապետությունների, ինչպես նաև աշխարհի զանազան երկրների բուսաբանական գիտահետազոտական հաստատությունների, բուսադարանների հետ, կատարելով տեսակների փոխանակում։

Հայաստանի գիտությունների ակադեմիայի բուսաբանության ինստիտուտի բուսաբանական այգու գիտական աշխատողները «Հայաստանի ֆլորան» բազմահատոր ուսումնասիրությունը և այլ աշխատությունները գրելիս հիմնականում օգտվել են բուսադարանի նմուշներից։ Այստեղ Հայաստանի և այլ երկրների բուսատեսակների ուսումնասիրություններ են կատարում նաև հանրապետության ուսումնական հաստատությունների բազմաթիվ դասախոսներ և ուսանողներ։

Բույսերի համակարգման բաժնում են աշխատում կրտսեր գիտաշխատող Շ. Ասլանյանը (աջից) և Ց. Մխիթարյանը։